

Երեկ, հոկտ. 13-ին, Էջմիածնում պաշտօնապէս սկսեցին հայ տաւերի զիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յորելեանական հանդէսերը:

Այդ առիթով աւելորդ չենք համարում ստորև առաջ բերել այն ծրագրերը, որով սկսեցին հանդէսները Էջմիածնում:

Հոկտ. 12-ին, երեկոյան Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր թափօրով իջաւ Մայր Տաճար, ուր տեղի ունեցաւ նախատօնակ ս. Քարգմանչաց յիշատակին:

Շարաթ, ս. Քարգմանչաց տօնին, հոկտ. 13-ին, հանդիսաւոր գնացքով Նորին Վեհափառութիւնը մեկնում է Օշական, ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորութիւնների:

Պատարագ ս. Մեսրոպի գերեզմանի վրայ:

Հայրապետական մաղթանք:

Պատարագից յետոյ պատգամաւորների բանախօսութիւններ, հեռագրներ և ուղերձները ընթերցում ս. Մեսրոպ եկեղեցու բակում:

Այսօր, կիրակի հոկտ. 14-ին Մայր Տաճարի Էջման սեղանի վրայ կը կատարուի հանդիսաւոր պատարագ, ապա հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին:

Այսօր պատարագից յետոյ կը լինի ցերեկոյթ երաժշտութեամբ և երգեցողութեամբ:

Շարաթ և կիրակի երեկոները հրաժարութիւն և երաժշտութիւն վանքի և ձեմարանի բակում:

Այս ծրագրով սկսեց յորելեանական տարին Էջմիածնում, երեկանից, հոկտեմբ. 13-ից և տեղի է մինչև 1913 թ.ի հոկտ. 12-ը, երբ և նոյն ս. Քարգմանչաց տօնին փակելու է յորելեանական տարին Էջմիածնում, ազգային հաստատութիւնների մասնակցութեամբ:

ՀԱՅ ՄՏՔԻ ՏՕՆԸ

Հազար հինգ հարիւր տարիներ անցան այն ժամանակներից, երբ հայ ազգի ամենահանձարեղ զաւակներից ամենահանձարեղը, որին ազգն ու եկեղեցին դասեցին սրբերի դասում, իր մայրենի լեզուի նշանազրիւրը պատրաստեց:

Տասն և հինգ երկար դարեր անցան այն օրերից, երբ ս. Մեսրոպի ձեռամբ գրեց առաջին հայ գիրը և այդպիսով մեր քաղաքակրթական կեանքի ամուր և անսասան հիմքը դրեց:

Արդ, ո՞վ կարող է իր մէջ ազգային ինքնասիրութեան և հայրենասիրութեան հուրն զգալ, և չը հրճել ու չը զգացել այս մեծ, այս անաւոր տօնի պատճառած ողորութեամբ:

Հազար հինգ հարիւր տարւայ հասակ ունի այս հսկայ տօնը. հազար հինգ հարիւր երկար ու գիտակցական տարիներ է անցկացրել մեր ազգային կեանքը և անցկացրել է հրի ու սրի, կրակի ու աւերի միջով... Արդ, ի՞նչն էր մեզ կապել մեր այս անմխիթար միջավայրի հետ և ի՞նչը չէր թող տալիս մեզ թողնելու մեր միջավայրը և գնալ ու կորչել անկող աշխարհի ան-

հրասաւր ծայրերում.— Սուրբ Մեսրոպի գիրը և շնորհիւ այդ գրի ծագած ու զարգացած հայ փառապանծ լեզուն: Թող օրհնէ յիշատակը մեծ մարդ և մեծ հայրենասէր:

Եւ այսօր, երբ մենք մի հոգրտ հայեացք ենք գցում մեր անցեալ կեանքի վրայ, երբ խորհում ենք մեղքաշուրթին եղիշէի զգացմունքների խորութիւնից, երբ հիանում ու ապշում ենք մեծ նորեկացու մտքի ու սրտի թռիչքներից, երբ ծուր ենք չորում անյաղթ փիլիսոփաներ Դաւթի և Եղնիկի խորախորհուրդ գիտութեանց առջև, երբ երկինք ենք վերանում մեր ամբողջ էութեամբ մեծ նարեկացու յախուն և ասուածային ողբերի ազդեցութեան տակ և երբ վերջապէս, սիրոյ մեծ երգչի՝ Ն. Քուչակի քաղցրանուշ երգերով մեր սրտերն ենք յուզում ու բորբոքում պատանեկական յոյզերով, մենք այդ ժամանակ չենք կարող չը յիշել Քեզ, ո՞վ մեծ բարերար, Քեզ, որ հայ մարդուն հայ գիր տւիր, Քեզ, որ լաւ բմբունելով ժամանակի պահանջն ու մեր դոյութեան պահպանութեան համար ամենամեծ միջոցը, մեր ազգային շէնքի հաստատուն հիմքը դրիր...

Եւ հաստատուն էր այդ հիմքը... Դարերի փոթորիկները չը կարողացան տատանել այդ անսասան ու ամուր շէնքը, և այսօր, Քո այժմեան երախտագէտ սերունդը բարձր բռնած: Քո պարզած սրբազան դրօշակը, գնում է անկանոց դէպի առաջադիմութիւն, դէպի կատարելագործութիւն, առանց որոնց՝ չկայ կեանք, չկայ դոյութիւն...

Անընդհատ և աստիճանաբար կը բթութիւնն ու կատարելագործութիւնը, գիրն ու գիրքը դարձել էին ամենքի սեփականութիւն և մեծ հայ մարդու գիւտից մօտ տասն դար յետոյ քաղաքակրթ Ներսայի զաւակներից մէկը հնարեց մի գիւտ, որի շնորհիւ միևնոյն զրբից, առանց մեծամեծ ծախսերի ու դժուարութեան արտատպում էին հազարաւոր օրինակներ և ձեռնտու գներով վաճառում ամեն մի ցանկացող բանասէրի:

Եւ ա՜հ մեծ Մեսրոպի մի արժանաւոր զաւակը, մեզանից ուղիղ 400 տարի առաջ տպագրում է առաջին հայ գիրքը և այդպիսով մեզ մասնակից անում Ներսայական կեանքի քաղաքակրթական բարիքներին:

Նարեկացին ու Պարեանցին, Եղիշէն ու Փարպեցին այլ ևս հարուստ մեծատան սեփականութիւնը չէին. շնորհիւ այս բարեբաղդ հանգամանքի, հայ մտքի արդիւնքները հազարաւոր օրինակներով տպագրեցին և տարածեցին ժողովրդի մէջ, մէկ կողմից տարածելով լոյս ու գիտութիւն, միւս կողմից ընդ միշտ ազատելով կորստից և ազաւազումներից:

Եւ ա՜հ այժմեան երախտագէտ սերունդը այս երկու համազգային մեծ տօները միացնելով իրար հետ, տօնում է այսօր յախուն բերկրութեամբ իր գրերի գիւտի հազար հինգ հարիւր և տպագրութեան չորս հարիւր ամեակը:

Եւ որքան վե՛հ, որքան փարթամ ու բազմակողմանի կատարենք այդ տօնը, այնքան մեծ չափերով ցոյց տւած կլինենք հանուր աշխարհին մեր քաղաքակրթական ու հասունութեան մեծութիւնը...

Գնանք կատարելու մեր գերազոյն պարտքը: